

# ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ ՏԻՏԱՆԸ

*Posted on June 19, 2020 by Keghart*



Category: [Opinions](#)



**2020 թուին հայ աշխարհը կը նշէ ծննդեան 200 ամեակները հայ իմացականութեան տիտաններէն երկու մեծանուն կղերականներու՝ Սկրտիչ Խրիմեանի եւ Հայր Ղեւոնդ Ալիշանի, որոնց դերը մեծ եղած է մեր եկեղեցական ու ազգային պատմութեան մէջ: Նախապէս անդրադաձած ենք **Խրիմեան Հայրիկի մասին**. այս թողարկումով **Դոկտ. Սարգիս Ատամ կը ներկայացնէ Ղեւոնդ Ալիշան տիտանը:** Խմբ.**

**Տոքթ. Սարգիս Ատամ**, Գերմանիա, 15 Յունիս 2020

Ղեւոնդ Ալիշան (*Քերովբէ Ալիշանեան*): Հայ բանաստեղծ, բանասէր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, 1838-ին Մխիթարեան Միաբանութեան անդամ: Ծնած է 6(18) Յուլիս 1820-ին Իսթանպուլ Աւագանի անունով՝ Քերովբէ: Վախճանած է 9 Նոյեմբեր 1901-ին Վենետիկ, Սուրբ Ղազար կղզիի մէջ: Ան զաւակն էր հնահաւաք-դրամագետի մը:

Հ. Ղեւոնդ Ալիշան, մկրտութեան անուն-մականունով՝ Քերովբէ Ալիշանեան Պետրոս-Սարգար 1832-ին , երբ տասներկու տարեկան էր, կը մտնէ Ս.Ղազար, Վենետիկ եւ դասընթացքը կ'աւարտէ 1841-ին: 1836-ին՝ 16 տարեկանին, եկեղեցական կանոնագիրի համաձայն անուանփոխուելով կը կոչուի Ղեւոնդ Ալիշան: 1841-էն սկսեալ ընդհատումներով դասաւանդած է Վենետիկի «Ռափայելեան» եւ Փարիզի «Մուրատեան» վարժարաններուն մէջ, 1848-ին եղած է Ռափայելեան վարժարանի տեսուչը, 1849-51 թուականներուն նշանակուած է «Բազմավէպ» պարբերականի խմբագիրը: 1870-ին կատարած է Միաբանութեան արժողակալի պարտականութիւնները:

1841-ին կը սկսի Հայր Ղեւոնդ Ալիշանի միաբանական եւ ուսուցչական գործունեութիւնը: Անմիջապէս կը նուիրուի ուսուցչութեան նոյն վարժարանէն ներս՝ միաժամանակ աշխատակցելով 1843-ին կեանքի կոչուած «Բազմավէպ» հանդեսին:

Այս շրջանին լոյս կը տեսնեն իր առաջին բանաստեղծութիւնները, որոնք գրաբարով գրուած էին եւ կը կրէին Մխիթարեաններու դասական դպրոցին շեշտակի կնիքը: 1848-ին կը նշանակուի «Ռափայելեան» վարժարանի տեսուչ՝ միաժամանակ ստանձնելով «Բազմավէպ»ի խմբագրութիւնը (1849-1851):

1849 ին, Իտալա-Աւստրիական պատերազմի հետեւանքով «Մուրատ-Ռափայելեան» վարժարանի տնօրէնութիւնը կը հարկադրուի առժամաբար ընդհատել դասաւանդութիւնները՝ վարելով ուսուցչական եւ վարչական պաշտօններ:

1850-ին կ'ուղեւորուի Հռոմ: Յաջորդ տարի կը վերադառնայ Վենետիկ, սակայն քիչ ետք, յատուկ առաքելութեամբ կը մեկնի դարձեալ Լոնտոն, Մուրատ Ռափայելեանի կտակին հարցով:

1872-ին կը մխրճուի հնապատմական գործերու պատրաստութեան գործին մէջ: Մինչեւ

իր մահը՝ 9 Նոյեմբեր 1901, վեհաշուք նահապետ Հ.Ղեւոնդ Ալիշան կը փակուի Ս. Ղազար վանքի իր աշխատանքներին մէջ եւ կը ստեղծէ անելի քան յիսուն հատոր հայագիտական պատկառելի երկեր, որոնք փառքը կը կազմեն հայ ժողովուրդի հոգեմտաւոր ժառանգութեան:

Ստեղծագործելու եւ ուսումնասիրելու, գիտութեան անսպառ պաշարը բաշխելու եւ մանաւանդ սերունդները հայ իմացականութիւնով դաստիարակելու անմահ ու սրագան գործին ռահվիրան է Ալիշան: Ան օժտուած է գրողի ու գիտաշխատողի բացառիկ շնորհներով, ստեղծագործելու բարձրորակ տաղանդով եւ իմաստութեամբ : Մխիթարեան Միաբանութեան եւ 1850-ականներու հայ ազգային վերածննդեան շարժումին մէջ Հ. Ղ. Ալիշանի կրթական եւ գրական գործունեութիւնը պատմական նշանակութիւն եւ կշիռ մը կը ներկայացնէ: Իր քերթողական վաստակին բացարձակ մեծամասնութիւնը գրաբարով գրուած է, հետեւաբար այսօր չի խօսիր սերունդներուն ու դուրս կը մնայ անոնց ընկալումէն : Ան կը խօսի մեզի ժԹ(19) դարու երկրորդ կեսի մեր համագգային տենչերէն եւ զանոնք երկնող հոգեւորականին ազգի, հողի եւ եկեղեցիի ազնուագոյն ձգտումներու հանդէպ ունեցած պաշտամունքէն:

Ալիշան եւ Խրիմեան, մէկը արեւմուտքի իսկ միւսը թե՛ արեւմուտքի եւ թե՛ արեւելքի մէջ, դաշն կ'ապրին ժԹ. դարու երկրորդ կեսի հայրենակարօտ, ազատատենչ գաղափարներով որպէս մեծութիւններ: Հոս ի հարկէ պէտք է շեշտել թե՛ Խրիմեան Հայրիկ Վանեցի է եւ եղած է նախ Թուրքիոյ Հայոց Պարրիարք, ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ան իր գրականութեամբ մաս կը կազմէ Արեւմտահայ գրականութեան ընտանիքին:

1850-1880 թուականներուն մեր գրականութեան մէջ Հայոց գրականութեան փառքն է Ալիշան:

Եւրոպան ցնցող յեղափոխական պոռթկումներու եւ Իտալիոյ ազգային միաւորման ու ազատագրութեան յեղափոխական շարժումներուն եւ իրադարձութիւններուն բարձրակետին հասած ժամանակ անտարբեր չի մնար երիտասարդ Ալիշան, որ «Բազմավէպ»ի էջերուն մէջ լոյս կ'ընծայէ «Նահապետ» ստորագրութեամբ իր ազգային-յեղափոխաշունչ բանաստեղծութիւնները՝ «Պլպուլն Աւարարայրի», «Կարմիր Վարդան», «Հայոց Աշխարհիկ», «Լուսնկայն Գերեզմանաց Հայոց», «Բամբ Որոտան» ,«Նուագք» եւ այլ բանաստեղծութիւններ:

Ալիշանի «Նահապետի երգերը» ոչ միայն նոր ուղի կը բանան Մխիթարեաններու դասական քերթողութեան առջեւ, այլեւ ընդհանրապէս արդի հայ գրականութիւնը կը թարմացնեն ու յառաջ կը մղեն վիպապաշտ (ռոմանթիք) դպրոցի հունով: Աւելի՛ն. հայ ժողովուրդի ազգային-ազատագրական զարթօնքին կրակը կը վառեն ժամանակի հայ մտաւորականութեան եւ երիտասարդութեան մէջ՝ եւրոպական ուստաններէն մինչեւ հեռու ակեր:

«Նահապետ» գրչանունով անմահացած Ղեւոնդ Ալիշան, որ ամեն բանէ առաջ Հաւատքի Մարդ էր, ապրեցաւ եւ գործեց Հայ Եկեղեցականի ոգեշնչող վարքով ու մեծ ներդրում ունեցաւ ոչ միայն որոշապէս Մխիթարեան Միաբանութեան ազգային դիմագծի պայծառակերտման, այլեւ ընդհանրապէս 19-րդ դարու հայոց ազգային զարթօնքի հոգեմտաւոր կեանքին մէջ:

Հակառակ գրաբարախառն իր հայերէնին, Հայր Ղեւոնդ Ալիշան նաեւ դրօշակիրներէն եղաւ մեր մայրենիի աշխարհաբար մշակման ու բիւրեղացման պայքարի ճանապարհին: Չարթօնքի շարժումին տարիներուն իր առաջին բանաստեղծութիւններով իսկ հայոց միջնադարեան գրական հայերէնը վերակենդանացուց եւ յառաջապահը դարձաւ սեփական ժողովուրդին հասկնալի ու սրտամօտ հայերէնով ստեղծագործելով:

Հայր Ղեւոնդ Ալիշան ստեղծեց ու հայոց սերունդներուն ժառանգ կտակեց ըստ ամենայնի կոթողական հարստութիւն մը հոգեմտաւոր արժէքներու, որոնք ներշնչման աղբիւր դարձան 19-րդ դարու ազգային մեր զարթօնքը իր բարձրակետին առաջնորդած հայ ազգային-ազատագրական պայքարին համար:

Ալիշան 1857-ին եւ 1858-ին յաջորդաբար լոյս ընծայեց գրքոյկներ, որոնք մէկ կողմէ մարդկային անսահման բարութեան, մարդկայնապաշտ ապրումներու եւ խոհերու, ինչպէս եւ քրիստոնէական հաւատքի վերահաստատման նորօրեայ աւետարաններ եղան, իսկ միւս կողմէ սրտերուն եւ մտքերուն մէջ վառեցին խարոյկը հայոց փառապանծ անցեալի ոգեկոչման, հայրենի բնութեան պաշտամունքին, հայրենի հողին, քարին ու ջուրին ոգեշնչման :

Հաւատքի մարդու, ազգային գործիչի եւ տաղանդաշատ գրողի իր մեծ պատգամը Ալիշան թուղթին յանձնեց նաեւ արձակ էջերով, որոնք 1871-ին լոյս տեսան «Խորհրդածութիւնք՝ ընդ եղեւնեաւ» հատորով: Իսկ հայագիտական աշխատասիրութեանց իր կոթողական վաստակով՝ Հայր Ղեւոնդ Ալիշան պատրաստեց, բառին ամենէն ընդգրկուն իմաստով, հանրագիտարանը Հայաստան Աշխարհին եւ ստեղծագործ Հայուն:

Հակառակ որ բնաւ չտեսաւ աշխարհը հայոց եւ չունեցաւ հնարաւորութիւնը ուղղակիօրէն ապրելու իր պաշտած ժողովուրդի առօրեային մէջ՝ Ալիշան գաւառ առ գաւառ եւ գիւղ առ գիւղ մանրամասնօրէն ներկայացուց պատմական Հայաստանը՝ իր թե՛ նիւթըն, թե՛ ոգեղէն բնութագրով, իր հողով ու բոյսերով, իւրաքանչիւր աւանի հետ կապուած պատմական ու ազգային յիշողութեամբ, հայերէնի ժողովրդային ու բարբառային ճոխութեամբ եւ հարստութեամբ՝ «Տեղագիր հայոց մեծաց», «Նշմարք եւ նշխարք Հայաստանի», «Շիրակ», «Սիսական», «Հին հաւատք Հայոց», «Արշալոյս Քրիստոնէութեան Հայոց», «Հայապատում» եւ միւս գործերով:

Ալիշան ոչ միայն հայագիտութեան ընծայաբերեց գիտելիքի հսկայական պաշար, այլեւ սկզնաղբիւր դարձաւ պատմագիտութեան եւ լեզուաբանութեան, աշխարհագիտութեան

**ԵՒ ԲՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՆՈՒՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՒ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ ԵՒ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒՄ:**

Այս բոլորով եզակի մեծությունն դարձավ Հայր Ղեւոնդ Ալիշան:

Ալիշանի «Հայբուսակ կամ Հայկական բուսաբանություն» (1895 թ.) վերագրեալ գիրքը կը նկարագրէ Հայաստանի մէջ աճող շուրջ 3400 բոյսեր եւ ծաղկատեսակները, աւելի քան 150 նկարներով ու անոնց բուժական յատկութիւններու թուարկումով :

Ալիշանի աւելի քան կեսդարեայ գիտական գործունեութեան ամփոփումն է «Հայապատումը» (1901 թ.): Երկի առաջին մասը՝ «Պատմիչք Հայոց»ը նուիրուած է հայ պատմագրութեան պատմութեանը, երկրորդը՝ «Պատմութիւնք Հայոց»ը տարբեր պատմիչներու երկերէ ընտրուած և դէպքերու ժամանակագրական կարգով խմբաւորուած 400 յօդուածներով կը ներկայացնէ վաղնջական շրջանէն մինչև ԺԷ. (17) դարու Հայոց պատմութիւնը:

Ղեւոնդ Ալիշան կը մահանայ 1901 թուականի Նոյեմբեր 9-ին և կը թաղուի Վենետիկի Ս. Ղազար կղզիին գերեզմանատան մէջ:

Ղեւոնդ Ալիշան կը գիտակցեր, որ այն ժամանակաշրջանին, երբ հայ ժողովուրդի ազգային զարթօնքի եւ համընդհանուր վերելքի տարիներն էին, պետք էր ոտքի հանել հայութիւնը եւ ոգեւորել զայն: Հարկաւոր էր հայ ժողովուրդի պատմութիւնը ճանաչելի դարձնել, անհրաժեշտ էր ուրեմն լաւ իմացութիւնը հայրենիքի աշխարհագրութեան, պատմութեան եւ մշակութային արժեքներուն: Սակայն այս բոլորը փոխանցելու համար հարկ էր միջոցներ որդեգրել, որ հասանելի ըլլային համայն հայութեան: Եւ այդ միջոցներէն մէկը ժողովուրդին խօսած լեզուն էր, այսինքն՝ աշխարհաբարը:

Ալիշանի գեղարուեստական ստեղծագործութեան մէջ աշխարհաբարի անցնելու առաջին նշանները ի յայտ եկան 1845-էն սկսեալ:

Աւելի քան տասը տարի, մինչեւ Յունուար 1862, «Հայադիր» ընդհանուր վերնագիրին տակ, «Բազմավէպ»ը հրատարակած է հայոց պատմութեան զանազան դէպքեր, պատմուածքներ, հայկական հին տոմարին վերաբերող նիւթեր:

Իրաւամբ ան հայ եկեղեցուոյ եւ հայ գրականութեան ու բանասիրութեան գազաթներէն մէկն է:

**Աղբիւրներ**

- Սիմոն Երեմեան, «Կեցսագրութիւն Հ.Ալիշանի», Վենետիկ, Սբ. Ղազար 1902
- «Հայր Ղեւոնդ Ալիշան», Ռատիօ «Եան», 20 Դեկտ. 2019

## Comments



**«Գեղարդ»** – 2024-03-24 15:11:06

Յարգելի Պրն. Յարուժ Մարտիրոսեան, Մատնանշումը տեղին է:  
Շնորհակալութիւն: Ակամայ թոյլ տրուած վրիպակը սրբագրուած է: «Գեղարդ»



**Յարուժ Մարտիրոսեան** – 2024-03-22 15:45:53

Ներողութեամբ՝ տեղադրուած նկարը Հ. Ղեւոնդ Ալիշանինը չէ: Իր  
ժամանակակից եւ բարեկամ վանեցի Կաթողիկոս Խրիմեան Հայրիկինը: